International Center for
Human Development
Մարդկային զարգացման
միջազգային կենտրոն
www.ichd.org

Ամառային դպրոցի կազմակերպման և հյուրանոցային ծառայությունների մատուցման Գնային առաջարկի ներկայացման

ՀՐԱՎԵՐ

02 մայիսի 2023թ.

«Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» հասարակական կազմակերպությունը (ՄԶՄԿ) «Քաղաքացիական կրթություն և մասնակցություն» ծրագրի շրջանակներում, 2023-2025թթ. նախատեսում է կազմակերպել ամառային դպրոցներ (յուրաքանչյուր տարվա ընթացքում մեկ անգամ, հինգ օր տևողությամբ) ՀՀ մարզերում և Երևանում բնակվող երիտասարդների մասնակցությամբ: Ծրագիրն իրականացվում է «Փրոջեքթ Հարմոնի Հայաստան» հասարակական կազմակերպության գլխավորած կոնսորցիումը, որի անդամներն են նաև ՄԶՄԿ-ն, Սիվիտաս Հայաստանը և Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնը: Ծրագիրը հնարավոր է դարձել ամերիկյան ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ ՄԶԳ միջոցով:

Առաջին ամառային դպրոցը նախատեսվում է կազմակերպել 2023թ. հունիսի 26-ից 30-ը: Միջոցառման տևողությունն է 5 օր (4 գիշեր): Դասընթացը մեկնարկելու է ժամը 10:00-ին և տևելու է մինչև 18:00-ն: Ամառային դպրոցին ակնկալվում է 18 հոգու մասնակցություն: Մասնակիցներից 10 հոգուն անհրաժեշտ է ապահովել գիշերակացով:

Սույնով հրավիրում ենք հյուրանոցային ծառայություններ մատուցող կազմակերպություններին մինչև ս/թ մայիսի 15-ը ներկայացնել գնային առաջարկ՝ միջոցառումը կազմակերպելու և հյուրանոցային ծառայություններ մատուցելու վերաբերյալ:

Խնդրում ենք գնային առաջարկի մեջ նշել.

1. Կազմակերպության անվանումը, կազմակերպաիրավական ձևը, հասցեն,
2. Կազմակերպությունն ԱՀՀ վճարող է թե ոչ,
3. Հետևյալ ծառայությունների մատուցման գնային առաջարկը ՝

Ծառայության տեսակը	**Միավորի գինը՝ առանց ԱԱՀ**
Single սենյակ *(10 սենյակ)*	.... դր՝ մեկ օրվա համար
Twin սենյակ (2 առանձին մահճակալով)	.... դր՝ մեկ օրվա համար
Սրահ դասընթացի կազմակերպման համար	.... դր՝ մեկ օրվա համար

Սայաթ Նովա 19, Երևան 0001, Հայաստան
19 Sayat Nova, 0001 Yerevan, Armenia
էլ.փոստ / e-mail: think-tank@ichd.org
Հեռ.՝ / Tel.: +374 10 582638
+374 10 528321
Ֆաքս՝ / Fax: +374 10 527082

(խնդրում ենք նշել սրահի տարողությունը և սրահի հետ տրամադրվող տեխնիկական միջոցները, օրինակ՝ պրոյեկտոր, միկրոֆոններ, ֆլիպչարթ, ջուր, գրենական պիտույքներ)	
Սնունդ.	
1. Նախաճաշ *(եթե ներառված չէ սենյակի գնում)*	.... դր՝ մեկ անձի համար
2. Ճաշ *(18 հոգու համար)*	.... դր՝ մեկ անձի համար
3. Ընթրիք *(10 հոգու համար)*	.... դր՝ մեկ անձի համար
4. Սուրճի ընդմիջում *(18 հոգու համար)*	.... դր՝ մեկ անձի համար

Գնային առաջարկը պետք է ստորագրված լինի կազմակերպության լիազորված անձի կողմից:

Տեղեկացնում ենք, որ ծրագիրը ազատված է ԱԱՀ վճարելու պարտավորությունից:

Ամենացածր գնային առաջարկ ներկայացրած կազմակերպության հետ կվարվեն բանակցություններ և կառաջարկվի կնքել ծառայությունների մատուցման պայմանագիր՝ բոլոր միջոցառումները կազմակերպելու նպատակով:

Սույն հայտարարության պահանջներին չբավարարող հայտերը ենթակա են մերժման առանց առաջարկը քննելու:

Գնային առաջարկը կարող եք ներկայացնել էլեկտրոնային փոստով՝ lmelikyan@ichd.org, կամ առձեռն՝ Սայաթ Նովա 19, «Անի Պլազա» հյուրանոց, բիզնես հարկ, սենյակ 18, հեռ՝ +374 582638:

«Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» ՀԿ